113. ՄԱՐԹՆ ՈՒ ՄԱՀԸ

Մի մարթ ասըմ ա. «Էնքան քյնա՛լ դեմ, վըրեր մահը ինձ տըեննա վեչ ու ընդի մահը ա՛դաթ չի ըլի»։ Սա՛ քյնըմ ա քյնըմ տըեննըմ ա՝ հրես մի մարթ ծիու ղնթրղեն փռնած կյա՛լիս ա։ Տրա՛ն վըրեր տըեննըմ ա, ասմ ա. «Էտ վերդի՞ ես քյնըմ»։

Ասմ ա. «Քյնըմ եմ հենց աշխար, վըրեր ընդի մահ չի ըլի»։

Էտ մարթը ասմ ա. «Դե իրար հետ քյնա՛նք»։

Մհա՛նք իրար հետ քյնըմ են, հասնմ մի կյեղ։ Էս ծիյով մարթը տրա՛ն ասմ ա. «Տու ծին պահի, ես քյնա՛մ էն կյեղը, տըեննամ քնի-լու տըեղ կլի՞»։

Էտ մարթը ծիյու ղնթրղեն փռնմ ա, կաղնըմ. էն մարթը հա՛մ քյնըմ ա, հա՛մ ետ մտիկ անըմ, ասմ ա. «Միյուն նստես վըեչ, հա՛»։

Նա՛, վըրեր քյնըմ ա պա՛շի դալդեն ընգյնմ, սա՛ ասըմ ա. «Մի էս ծիյուն նստեմ, տըեննամ ինչ ղայդի ծիյ ա»։ Միյուն նստմ ա թե չէ, ծին տա՛ռնըմ ա մի մեծ սինի՝ մեչն էլ լիքը ջանավարնի, սրա՛ չորս ղոլը կտրած։

Էս մարթը ծեռաց թռչըմ ա, էն ղոլը ընգյնըմ։

Տեննըմ ա ըլետ ծին ընդի կաղնած, ջանավար-մանավար չի կա։ Մի քիչ մընմ ա, էն մարթը կյա՛լիս ա, ասըմ ա. «Միյուն նստեցի՞ր»։

Ասմ ա. «Հա՛»։

Ասմ ա. «Ի՞նչ տըեհարա»։

Ասմ ա. «Մի սինի, ես միչին, չորս ղոլըս լիքը ջանավարա»։

Ասմ ա. «Ա՛յ, վըերդի քյնա՛ս, տըհե մահը չորս ղոլտ կտրած ա։ Դե՛ ետ տա՛ռ, քյնա՛ ծրեր տուն ու լա՛վ գյգացի, վըերդի գյա՛նք կա, ընդի էլ մահ կա»։